կառավարութիւն թեզի յանձնեցի, եւ հիմա էլ, քու գործիդ խառնուելու ոչ կամք ունիմ եւ ոչ փափագ. կ'ուզես կախել տուր այդ մարդը, կ'ուզես ձեռքը կտրել տուր, ես կընդունիմ թէ արժանի է ամէն տեսակ պատժոց, միայն պատերազմէ դուրս ցուրտ արիւնով չեմ կարող մէկը հարուածել եւ պատժել. առիւծը, վագրը գառագիղի մէջ սպաննել չեմ կրնար, պէտք է արձակեմ եւ այնպէս վրան հարձկիմ:

— Այո՛, առիւծին, վագրին այնպէս պէտք է ընես, բայց գետնվյյքարշ սողունին, որ կրունկդ կուզէ խածնել եւ թունաւորել պէտք է գլուխը ճզմել ու ջախջախել… է՜հ հայրիկ, չես խօսիր… եթէ այդպէս է ես է՛լ բերանս չեմ բանար:

— Ոչ դուստր իմ, ոչ, դու իրաւունք ունիս,— ըսաւ Խոսրով ձեռքեն բռնելով եւ քովը նստեցնելով,— բայց Գուրգէնի բնաւորութիւնն այնպէս է, տասն անգամ նոյն թշնամին բռնած եւ թողած է, միշտ վերջը զղջալով: Հիմա այդ մարդը պէտք է շղթայակապ կաթողիկոսին յուղարկէի Հոգեւոր տէրը արդար, առաքինի, իմաստուն մարդ է, երբ իմանայ անարժան քահանային ըրած անզգամութիւնքը փակել կ'ուտայ զինք վանք ար, ուսկից անկարելի կը լինի ելնել մինչեւ կենաց վերջի օրը, եւ առատ ժամանակ կ'ունենայ ապաշխարելու իւր չարութեանց վրայ: Երթանք ուրեմն ներսի սենեակը, հարցաքննենք մարդը:

Մարտիրոս վարդապետ ամէն բան խոստովանեցաւ, պատմեց թէ ինչպէս ինք Գուրգէնի առ Հեղինէ գրուած նամակը խարդախել էր, ինչպէս ինք Աշոտի դիւանագէտ մատնութեան գործիք եւ խորհրդակից եղել էր երեք դաւաճանաց հետ, եւ թէ ինչպէս ետքը Գուրգէն մատներ էր եպիսկոպոսանալու յոյսով:

Երկրորդ առաւօտ Վահրիճ քանի մը հոգուով իւր այս շնչաւոր աւարը բարձեալ ձիու մը վրայ փոքրիկ ղորաց գունդի մը ընկերութեամբ կը տանէր կաթողիկոսին, որ Սեւանայ անապատը հրամայեց զնայ ուղղել դատապարտելով ապաշխարութեան իւր անզգամութեանդ համար: Ծերունի Խոսրովու խօսքը կատարուեցաւ ինչպէս զրուցել էր Հեղինէի: